

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՄԻ-ի ռեկտոր

\_\_\_\_\_ Գ.Կ. Խաչատրյան

“29” \_\_06\_\_ 2012թ.

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ**

**ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ \_6\_ “\_29\_” \_\_\_\_\_06\_\_\_\_\_ 2012թ.)

## 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն փաստաթղթով սահմանվում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում (այսուհետ՝ ՎՊՄԻ) պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման (այսուհետ՝ ՈԲ) ծրագիրը կրեդիտային համակարգով կազմակերպելու կարգը:
- 1.2. Կանոնակարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ինչպես նաև ՎՊՄԻ կանոնադրությանը և ինստիտուտի զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան:
- 1.3. ՎՊՄԻ-ում պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագիրը կազմակերպվում է ըստ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» մեթոդական փաստաթղթի:
- 1.4. ՈԲ-ն դասախոսների տեսական ու գործնական գիտելիքների համակարգումը և նորացումն է՝ կապված նրանց որակավորման մակարդակին ներկայացվող պահանջների բարձրացման և մասնագիտական ու մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների յուրացման անհրաժեշտության հետ:
- 1.5. Կրեդիտային համակարգով ՈԲ ծրագրի նպատակն է՝ համալրել ու բարելավել ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմը որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան և ապահովել դասախոսների ընդհանուր ու մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը:
- 1.6. Դասախոսների ՈԲ ծրագրի խնդիրներն են՝ ապահովել նրանց ակադեմիական շարժունությունը, ստեղծել որակի հավաստման ներքին մեխանիզմներ և ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում:
- 1.7. ՈԲ-ն (հնգամյա շրջափուլով) համարվում է պարտադիր ՎՊՄԻ 55 տարին չլրացած հիմնական դասախոսների համար մանկավարժական առնվազն մեկ տարվա անընդհատ ստաժի դեպքում: ՎՊՄԻ մյուս դասախոսները ՈԲ ծրագրին կարող են մասնակցել կամընտրաբար՝ գործատուի համաձայնությամբ:
- 1.7.1. Հանրապետության մյուս բուհերի դասախոսները ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվող ՈԲ ծրագրին կարող են մասնակցել նրա կրթական կառուցամասով կամ ըստ գործատուի պահանջի՝ լրացուցիչ կրթության այլ ծրագրով:

- 1.8. ՎՊՄԻ դասախոսների ՈԲ ծրագիրը ֆինանսավորվում է ՎՊՄԻ կենտրոնացված միջոցների հաշվին, այլ բուհերի դասախոսներին՝ վճարովի հիմունքով, ինչը սահմանվում է ռեկտորի հրամանով:
- 1.9. Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.
- **դասախոսների որակավորման բարձրացման հենքային ծրագիր (այսուհետ՝ Յենքային ծրագիր)**՝ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր»,
  - **դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագիր (այսուհետ՝ Անհատական ծրագիր)**՝ ՎՊՄԻ դասախոսի՝ Յենքային ծրագրի հիման վրա իր նախասիրություններին և մասնագիտության ոլորտի նոր պահանջներին համապատասխան կազմած ծրագիր:

## **2. Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի ձևավորումը**

- 2.1. Դասախոսը ՈԲ է անցնում հնգամյա ժամկետում (2012/2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սկսած)՝ Անհատական ծրագրով, որը ձևավորվում է Յենքային ծրագրի հիման վրա:
- 2.1.1. Այլ ժամկետում ծրագրին միանալու դեպքում դասախոսի ՈԲ հնգամյա շրջափուլը հաշվարկվում է տվյալ կիսամյակից սկսած:
- 2.2. Դասախոսի Անհատական ծրագրի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 13-ը նա հավաքում է պարտադիր մոդուլներից, 17-ը՝ ընտրողաբար:

**Պարտադիր բեռնվածությունն ունի հետևյալ բաշխվածությունը**

Մոդուլի անվանումը	Սահմանված կրեդիտը	Ժամաքանակը լսար./ինքն.	Գնահատման ձևը
<b>Ա. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	10		
1. Անգլերեն ակադեմիական միջավայրում (սահմանված վեց մակարդակներից մեկը)	3	60/30	քննություն
2. Համակարգչային գրագիտություն (կիրառական ծրագրեր՝ Word, Excel, Internet Explorer և այլն)	2	20/40	ստուգարք
3. Լսարանային ցուցադրությունների պատրաստում (Power Point և այլն)	2	20/40	ստուգարք
4. Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ	1	10/20	ստուգարք
5. Մասնագիտության արդի հիմնախնդիրները	2	20/40	ստուգարք
<b>Բ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՄԵԹՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	3		հավաստագրում
1. Գիտական հոդված	1		
2. Ուսումնամեթոդական աշխատանք	1		
3. Ջեկուցում համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում)	1		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	13	130/170	

2.3. 13 կրեդիտ պարտադիր բեռնվածությանը դասախոսն ըստ իր նախասիրությունների ավելացնում է ևս 17-ը՝ լրացնելով պահանջվող կրեդիտային աշխատածավալը:

2.3.1. Կրթական կառուցամասի առաջին՝ «Անգլերենը ակադեմիական միջավայրում» մոդուլն ունի 6 մակարդակ՝ 3-ական կրեդիտ բեռնվածությամբ: ՈՒՔ ծրագրի հնգամյա շրջափուլում ունկնդրի համար պարտադիր է մեկ մակարդակի ուսումնասիրումը և յուրացումը՝ 3 կրեդիտ բեռնվածությամբ: Ըստ դասախոսի մասնագիտության և պատրաստության՝ պարտադիր բեռնվածություն է սահմանվում տարբեր մակարդակներից:

Այլ մասնագիտությամբ դասախոսը հնգամյա շրջափուլում սույն մոդուլից կարող է ձեռք բերել 3-9 կրեդիտ: Եթե նա ունի անգլերենից որոշակի նախորդող պատրաստություն, սկզբում, առանց որևէ դասընթացի մասնակցելու, անցնում է թեստավորում՝ փաստելու, թե մոդուլի 6 մակարդակներից որին է տիրապետում ըստ սահմանված պահանջների: Տվյալ՝ սահմանային մակարդակի իմացության համար ունկնդիրը միայն քննությամբ կարող է վաստակել լրացուցիչ 3 կրեդիտ, բայց այս դեպքում նրա համար պարտադիր (չեմային) է դառնում հաջորդ մակարդակի յուրացումը՝ ձեռք բերելու պահանջվող 3 կրեդիտը: Իր

նախաձեռնությամբ դասախոսը կարող է յուրացնել ևս մեկ մակարդակ՝ ստանալով լրացուցիչ 3 կրեդիտ:

- 2.3.1.1. «Անգլերեն լեզու» մասնագիտությամբ դասախոսի համար շեմային է 5-րդ մակարդակը, նվազագույն բեռնվածությունը՝ 3 կրեդիտ, առավելագույնը՝ 6: Եթե նա ունի 5-րդ մակարդակի համար նախորդող բավարար պատրաստություն, կարող է միայն քննությունը հանձնել՝ վաստակելով լրացուցիչ 3 կրեդիտ: Այս դեպքում ունկնդրի համար պարտադիր է դառնում հաջորդ՝ 6-րդ մակարդակի յուրացումը՝ ձեռք բերելու պահանջվող 3 կրեդիտը:
- 2.4. «Մասնագիտական պատրաստություն» կրթամասից պարտադիր է առաջին մոդուլի յուրացումը: Կրթամասի մյուս մոդուլները դասախոսը իր նախասիրությամբ է ընտրում՝ ըստ մասնագիտության կամ մասնագիտացման:

### **3. Որակավորման բարձրացման ծրագրի կառավարումը**

- 3.1. Ծրագրի իրականացումն ապահովելու և համալսարանական ու ֆակուլտետային գործընթացները համադրելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվում է ՈԲ ծրագրի պատասխանատուի ինստիտուտ՝ ըստ ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների.
- 3.1.1. Ծրագրի կազմակերպական հարցերով ընդհանուր պատասխանատվությունը և համակարգումը վերապահվում են դասախոսների և ուսումնառության աշխատակազմի որակավորման բարձրացման (ՈԲ) բաժնին,
- 3.1.1. Ծրագրի բովանդակային հարցերով՝
  - 3.1.1.1. Ընդհանուր պատասխանատվություն են կրում ՎՊՄԻ համապատասխան ստորաբաժանումները և նրանց ղեկավարները,
  - 3.1.1.2. Հենքային ծրագրի առաջին և երկրորդ կրթամասերի համար՝ համապատասխան ֆակուլտետների պատասխանատուները,
  - 3.1.1.3. Երրորդ և չորրորդ կրթամասերի համար՝ յուրաքանչյուր ֆակուլտետի պատասխանատուն:
- 3.1.2. Ֆակուլտետի պատասխանատուին է վերապահվում նաև ծրագրի հետազոտական մեթոդական կառուցամասի իրականացման ուղղորդումը:
- 3.1.3. Ծրագրի պատասխանատուի համար սահմանվում է տարեկան 30 ժամ լրացուցիչ բեռնվածություն:

- 3.2. ՈԲ-ի համակարգում ապահովվում է նաև բաց տեղեկատվություն՝ ՎՊՄԻ կայքէջի միջոցով: ՈԲ ծրագրի և գործընթացի մասին տեղադրվում է մշտապես թարմացվող տեղեկատվություն, որից յուրաքանչյուր դասախոս կարող է իրազեկ դառնալ իր կուտակած կրեդիտների գրանցված լինելուն:
- 3.3. Ծրագրի կատարման շահագրգիռ անձը և գլխավոր պատասխանատուն ունկնդիր դասախոսն է: Յուրաքանչյուր ունկնդիր վարում է «Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի իրականացման օրագիր»՝ ինքնավերահսկելով իր իսկ ծրագրի կաարումը: Նա ինքը պետք է ժամանակին իրազեկի ՈԲ բաժնին հիմնական կրթական ծրագրից դուրս (որակավորման բարձրացման այլ ձևերով) իր վաստակած կրեդիտների մասին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթուղթ, և հավաստիանա, որ այդ կրեդիտները գրանցվել են իր հաշվին:
- 3.4. Ամբիոնները և ֆակուլտետները նույնպես պետք է վերահսկեն իրենց դասախոսական համակազմի կողմից ծրագրի կատարումը՝ նկատի ունենալով, որ այդ մասին ամենամյա տեղեկատվություն է ներկայացվում գիտխորհուրդ:

#### **4. Որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպումը**

- 4.1. Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ՎՊՄԻ ռեկտորի հրամանով հաստատվում են՝
  - 4.1.1. ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ հնգամյա հեռանկարային պլանը,
  - 4.1.2. ՈԲ ծրագրի ֆակուլտետային պատասխանատուների կազմը,
  - 4.1.3. կանոնակարգային փաստաթղթերի ձևերը:
- 4.2. Կրթական մոդուլների ուսումնական ծրագրերը մշակում են պատասխանատու ստորաբաժանումները (ֆակուլտետ կամ ամբիոն), և իրականացնում՝ ՈԲ բաժնի՝ պատասխանատուների հետ համատեղ:
- 4.3. Մանկավարժական առնվազն մեկ տարվա անընդհատ ստաժ ունեցող և 55 տարին չլրացած ՎՊՄԻ հիմնական դասախոսները 2012 թ. սեպտեմբերին ձեռք են բերում (ֆակուլտետային պատասխանատուից, ՈԲ բաժնից կամ ՎՊՄԻ կայքէջից) «Դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագրի իրականացման օրագիրը»՝ դառնալով ՈԲ ծրագրի առաջին շրջափուլի ունկնդիրներ:
- 4.4. Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի առաջին շաբաթվա վերջին օրը նախատեսվող դասընթացների ժամանակացույցը տեղադրվում է ՎՊՄԻ

կայքէջում, ինչպես նաև ուղարկվում ֆակուլտետներ: Տեղադրվում են նաև ուսումնական ծրագրերը:

- 4.5. Դասախոսը, ծանոթանալով ժամանակացույցին, ընտրում է տվյալ կիսամյակում լսելիք դասընթացը (դասընթացները) և կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ՈԲ բաժին ներկայացնում մասնակցության հայտ՝ էլեկտրոնային ձևով (ժոժ ձևաչափով) կամ թղթային տարբերակով:
  - 4.5.1. Հայտի բոլոր տողերի լրացումը պարտադիր է: Ոչ լրիվ կամ ոչ ճիշտ լրացված հայտը չի ընդունվում:
  - 4.5.2. Հայտի բովանդակության փոփոխությունը հնարավոր է միայն մինչ հայտերի ներկայացման հայտարարված ժամկետի ավարտը:
  - 4.5.3. Վճարովի հիմունքով մասնակցության հայտում պետք է նշվի նաև ֆինանսավորման աղբյուրը:
- 4.6. Ներկայացված հայտերի կազմակերպական-տեխնիկական ընտրությունն իրականացնում է ՈԲ բաժինը կիսամյակի երրորդ շաբաթվա ընթացքում: Հայտը համարվում է ընդունված, եթե այն գրանցվում է, և նրան տրվում է գրանցման համար: Ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:
- 4.7. Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ եւ ներկայացրել սահմանված թվակազմով ունկնդիրներ (8-15՝ ըստ դասընթացների) ճշգրտված ժամանակացույցը հաստատվում է պրոռեկտորների կողմից և տեղադրվում ՎՊՄԻ կայքէջում, ինչպես նաև ուղարկվում մասնակից ունկնդիրներին:
- 4.8. Խմբերի ձևավորումը, ունկնդիրների ցուցակը և պարապմունքների սկիզբն ու ավարտը ձևակերպվում են պրոռեկտորների հրամանով: Պարապմունքներն սկսվում են կիսամյակի չորրորդ շաբաթվանից:
- 4.9. Դասընթացի յուրացումն ավարտվում է ատեստավորումով (քննությանը կամ ստուգարքով):
  - 4.9.1. Պարապմունքներին մասնակցած, բայց ատեստավորում չանցած ունկնդիրը քննությունը կամ ստուգարքը կարող է նորից հանձնել՝ կրկնելով դասընթացը:
  - 4.9.2. Ընդհանուր պատրաստության կրթամասի որևէ բաղադրիչից բավարար պատրաստություն ունենալու և այն ընդունված կարգով փաստելու դեպքում (ճանաչվում է ներկայացված փաստաթուղթը, կամ անցնում է ատեստավորում) ունկնդիրը ստանում է սահմանված Կրեդիտները՝ առանց մասնակցելու դասընթացին:

- 4.9.3. ՎՊՄԻ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները կարող են ճանաչվել՝ հաշվարկվելով Յենքային ծրագրի համապատասխան բաղադրիչի համար սահմանված Կրեդիտների շնորհմամբ:
- 4.10. Կրթական կառուցամասի չորրորդ կրթամասից (Որակավորման բարձրացման այլ ձևերե) և հետազոտական-մեթոդական կառուցամասից ունկնդիրը կրեդիտներ է կուտակում միայն ՈԲ ծրագրի հնգամյա շրջափուլում կատարած աշխատանքի համար:

### **5. Որակավորման բարձրացման ծրագրի արդյունքների ամփոփում**

- 5.1. Դասախոսի Անհատական ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ, որի համար հիմնական չափանիշ է Յենքային ծրագրով սահմանված պահանջների կատարումը:
- 5.2. Շրջանավարտ ունկնդիրը լրացնում է ՈԲ ծրագրի կատարման մասին հաշվետվության ձևաթուղթը՝ կցելով հավաստող փաստաթղթերը, և ներկայացնում ՈԲ բաժին:
- 5.3. ՈԲ բաժինը ստացած հաշվետվությունների վերլուծությամբ ճշգրտում է ներկայացված փաստաթղթերի իսկությունը, հավաստում ունկնդիրների մասնակցությունը և ընդհանուր հաշվետվություն ներկայացնում ամփոփիչ (փաստաթղթային) ատեստավորման:
- 5.4. ՈԲ ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած դասախոսին տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայական: Ամփոփիչ ատեստավորում չանցածները ստանում են տեղեկանք ծրագրին մասնակցելու մասին՝ կատարման ծավալի նշումով:
- 5.4.1. ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագրի համամասնակից այլ բուհերի ունկնդիր դասախոսներին տրվում է հավաստագիր՝ կրթական կառուցամասով ծրագրի կատարման ծավալի նշումով: